ՈՐՈՇՈՒՄ

20 ապրիլ, 2021 թվականի № 29-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ», «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 91-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման 1-ին կետը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ համատեղ հիշատակման ժամանակ՝ Ընկերություններ, իսկ առանձին հիշատակման ժամանակ՝ Ընկերություն) 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը Հանրային հեռարձակողի խորհրդի ներքին աուդիտի բաժնի կողմից ստուգման ենթարկելու անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհրդի ներքին աուդիտի բաժնին են վերապահված «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 91-րդ հոդվածով սահմանված՝ Ընկերության վերստուգող հանձնաժողովի լիազորությունները, իսկ Հանրային հեռարձակողի խորհրդին վերապահված են Ընկերությունների հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի ներքին աուդիտի բաժնի կողմից անցկացնել Ընկերությունների 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումներ:

2. Հանձնարարել Հանրային հեռարձակողի խորհրդի ներքին աուդիտի բաժնին մինչև 2021 թվականի ապրիլի 29-ը սույն որոշման 1-ին կետով նախատեսված ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստել և Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացնել «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 93-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող եզրակացություն յուրաքանչյուր Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

20 ապրիլ, 2021 թվականի

ք. Երևան